

ԴԱՐՁՅԱԼ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ № 7709 ՁԵՌԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ԱՍԱՏՈՒՐ ՄԵԱՑԱԿԱՆՑԱՆ

Հայկական միջնադարյան ժողովրդական երգերի հարստության մեջ բացառիկ տեղ է գրավում «Խաչգուզի շարքը»՝ գրի առնված XVII դ. Խաչգուզ (Խաչերես, Խաչիկ, Խաչատուր) Կաֆայեցու ձեռքով: Բարեբախտաբար նրա կազմած ժողովածուն հասել է մեզ և պահպանվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (№ 7709): Սկսած 1930 թ., նշված ժողովածուն գրավել է Մ. Աբեղյանի, Մ. Տեր-Մովսիսյանի, Ն. Ակիմյանի և շատ ուրիշների ուշադրությունը: Նրանից կատարվել են բնագրերի հրատարակություններ, որոնց մի մասն արժանացել է թարգմանության՝ ռուսերեն, գերմաներեն և այլ լեզուներով: Վերջերս Գ. Աբգարյանը, գնահատելով նշված ժողովածուի գրչի կազմած ժամանակագրության գերմաներեն թարգմանությունը, դիտողություններ է արել այդ ձեռագրում գտնվող ժողովրդական երգերի հրատարակության վերաբերյալ: Առաջին աշխատանքը իրագործված է հունգարացի հայագետ Է. Շյուցի կողմից 1975 թ., իսկ երկրորդը՝ մեր՝ 1956 թ.: Գ. Աբգարյանի կարծիքով, քանի որ սույն ձեռագրի մասին հայտնված «տեղեկությունները գերմաներեն թարգմանության միջոցով արդեն դուրս են եկել հաշվարանական գրականության սահմաններից՝ ավելի է մեծանում դրանց ճշգրտման անհրաժեշտությունը» (էջ 67)²: Այդ նպատակով հոգևածագիրը փորձել է վերանայել այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են, օրինակ, մեր գրքում քննված հայկական միջնադարյան ժողովրդական երգերի գրառման սկզբնավորման ժամանակի, նրանց առաջին գրառողի, Խաչգուզի՝ որպես ժողովրդական երգերի հետ կապված գործչի, № 7709 ձեռագրում գտնվող ժողովրդական երգերի գրառման ժամանակի, նրանց բնագրերում առկա աղավաղված որոշ հատվածների, № 7709 ձեռագրի ստեղծման ժամանակի հարցերը:

Արդ, ծանոթանանք այդ բոլորին ֆեկ առ մեկ՝ դրանք բաժանելով երեք հիմնական խմբերի:

Ա. Հայկական միջնադարյան ժողովրդական երգերի գրառման սկզբնավորման ժամանակի հարցը

Գ. Աբգարյանը քաղելով մեր գրքից մի հատված և զուգադրելով այն է. Շյուցի առաջարանից առնված մի տողի հետ, կատարում է նրանցից չբխող (բայց նրանցով հիմնավորված համարվող) հետևյալ եզրակացությունը. «Այսպիսով, ըստ գոյություն ունեցող կարծիքի, հայկական ժողովրդական

¹ ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1977, № 6, էջ 65—78:

² Հեղինակը չի նկատել, որ այդ տեղեկությունները դրանից առաջ են դուրս եկել հաշվարանական սահմաններից (տե՛ս «Армянская средневековая лирика», Л., 1972, В. Мнякелян, На Крымской земле, Ереван, 1974).

Լրգերի գրառման գործն սկսվել է առաջին անգամ XVII դ.» (էջ 67)։ Գ. Արգարյանը հետևողականորեն զարգացնելով իր միտքը, հոգևածի ուսման ամփոփման մեջ եզրափակում է, թե «первые записи средневековых армянских народных песен были сделаны не в начале XVII в., как это принято считать, а раньше» (էջ 78)։

Հարկ ենք համարում պատասխանել, որ մեր գրքում³ այնպիսի միտք, ինչպիսին վերագրում է մեզ Գ. Արգարյանը, չի հայտնվել։ Առաջին անգամ կազմելով հայկական միջնադարյան ժողովրդական երգերի այդ համահավաք ժողովածուն՝ գիտա-քննական բնագրերով, մենք, բնականաբար, այնտեղ զբաղվել ենք նաև նրանց գրառման սկզբնավորման ժամանակի ուսումնասիրությամբ. և եզրակացրել, որ այդ գործն սկսվել է ոչ թե XVII, այլ X—XIV դարերում։ Ահա համապատասխան տողերը մեր գրքից. «...Պատմական այս երևույթի պատճառով հնարավոր է դառնում, որ X—XIV դարերից սկսած երբեմն-երբեմն գրի առնվեն նաև ժողովրդական առանձին երգեր... Եվ երբ գրիչները արտագրել են այս կամ այն բանաստեղծի գործերը, կազմել են զանազան տաղարաններ, ժողովածուներ, նրանք երբեմն էլ, ի միջի այլոց, գրի են առել իրենց իմացած ժողովրդական երգերից մի երկու նմուշ» (էջ 10)։ Մենք այլ կերպ մտածել չէինք էլ կարող, որովհետև նույն գրքում հրատարակել ենք բազմաթիվ երգեր, որոնք քաղված են XIV—XVI դարերի ընդօրինակություններով մեզ հասած ձեռագրերից։ Դրանցից են, օրինակ, 218—219, 226—227, 233—234, 295—296, 304—316 (D օրինակ), 366—368 (C օրինակ), 374—376 (E օրինակ), 377-րդ էջերում տպագրված երգերը։

Գ. Արգարյանը նույնպիսի սխալ եզրակացության է հանգել նաև հայ-փական միջնադարյան ժողովրդական երգերի առաջին գրառողի հարցի կապակցությամբ։ Այդտեղ, առարկելով մեզ, նա գրել է. գոյություն չունի «հաստատ հիմք՝ պնդելու համար, թե հայկական ժողովրդական երգերը գրի է առել առաջին անգամ խաչատուր Կաֆայեցին» (էջ 70), այսինքն՝ № 7709 ձեռագրի գրիչը՝ ապրած XVII դարում։

Վերևում շարադրված մեր բացատրությունից հասկանալի է, որ մենք չէինք կարող հայկական միջնադարյան ժողովրդական երգերի գրառման սկզբնավորումը փնտրել X—XIV դդ., հրատարակել XIV—XVI դդ. ընդօրինակություններով մեզ հասած բազմաթիվ երգեր, և միաժամանակ դրանց առաջին գրառողին համարել XVII դ. գործիչ խաչատուր Կաֆայեցուն։ Գ. Արգարյանը պատշաճորեն չի ծանոթացել իր քննադատած տողերին, ուստի և աղավաղվել է մեր հայտնած այնքան պարզ ու մեկին միտքը։ Բանն այն է, որ պատասխանելով մեզ հետաքրքրող այն հարցին, թե ո՞վ է մեզ հասած ժողովրդական երգերից յուրաքանչյուրի գրի առնողը, մենք գրել ենք. «Սակայն, դժբախտաբար, այդ մասին տվյալներ չեն պահպանվել»։ Այնուհետև ավելացրել ենք. «Այս առումով եզակի տեղ է գրավում... № 7709 ձեռագիրը, որտեղ գրիչն իրեն կոչում է խաչգուզ կամ խաչիկ երեց... Ահա այս գրիչը 1608 թ., 16 տարեկան հասակում գրի է առել երկու տասնյակից ավելի երգեր... Հենց այդ պատճառով էլ ինքը՝ խաչգուզը հանդես է գալիս որպես

³ Ա. Ա. Մ և ց ա չ ա ն, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956.

հայկական ժողովրդական երգերի մեզ հայտնի առաջին գրի առնողը» (էջ 10—11): Այլ է առհասարակ ժողովրդական երգերից յուրաքանչյուրի գրառման հարցը և այլ՝ այն առաջին գրառողի հարցը, որի անունը հասել է մեզ: Նախորդ գրառողների անունները չեն պահպանվել. առաջին անունը, որ հասել է մեզ՝ հաշգուղն է:

**Բ. № 7709 ձեռագրում գտնվող ժողովրդական երգերի
(«հաշգուղի շարքի») առաջին գրառողի հարցը**

Գ. Արգարյանը ձգտում է համոզել, որ հաշգուղը № 7709 ձեռագրի ժողովրդական երգերի գրառողը չէ: Այս հայտարարությունը նա փորձում է հիմնավորել երկու խմբի բաժանվող մեկնաբանություններով: Առաջինն այն է, որ № 7709 ձեռագրում գտնվող «ժողովրդական երգերից մի քանիսը հանդիպում են նաև այլ ձեռագրերում (հետևաբար՝ կարող էին գրի առնված լինել ոչ անպայման Կաֆայեցու կողմից)» (էջ 70): Այո՛, դա ճիշտ է, բայց չէ՞ որ այս հանգամանքը մենք ժամանակին հաշվի ենք առել և կատարել պատշաճ դիտողություն, գրելով. «այդ երգերից միայն 4-ն են, որ հանդիպում են նաև ուրիշ ձեռագրերում և կարող են ընդօրինակված լինել, իսկ մնացածները փրկվել ու մեզ են հասել հաշգուղի շնորհիվ» (էջ 10): Հասկանալի է, որ մեր խոսքը «մնացածների» մասին է, ուստի ճիշտ չի վարվել մեր ընդդիմախոսը, երբ այլ ձեռագրերից ևս հայտնի երգերի օրինակով կամեցել է տարակուսելի դարձնել նաև այդ «մնացածները», այսինքն՝ այն երգերը, որոնք գրի է առել միայն հաշգուղը: Մեր գրքում դրանք միմյանցից տարբերված են ոչ միայն վերոհիշյալ դիտողությամբ, այլև նրանով, որ հաշգուղի գրի առածները ծանոթագրությունների բաժնում դրված են «հաշգուղի շարքից» նշումի տակ, իսկ մյուսները՝ ոչ:

Գ. Արգարյանի պատճառաբանություններից մեկն էլ այն է, թե «№ 7709 ձեռագրում պահպանված երգերում կան ավելի վաղ ժամանակներում դրի առնված լինելու մասին վկայող տվյալներ: Այդ երգերում առկա գրչական աղճատումները ցույց են տալիս, որ հաշատուր Կաֆայեցին դրանք արտագրել է վաղօրոք գոյություն ունեցած ձեռագրերից» (էջ 70):

Նախ՝ արտագրված լինելու մասին: Գ. Արգարյանն այստեղ էլ մոռացել է այդ իրողության վերաբերյալ մեր հայտնած կարծիքը: Զե՛ որ մենք էլ «հաշգուղյան շարքի» առկայությունը № 7709 ձեռագրում դիտել ենք որպես ընդօրինակության և ո՛չ գրառման արդյունք (էջ 463): Բանն այն է, որ մեզ չեն հասել հաշգուղի անմիջական գրառումները, պահպանվել են լոկ դրանցից նույն հաշգուղի կատարած արտագրությունները: Հիշեցնենք, որ հոգվածագիրը մի այլ առիթով անդրադարձել է նաև մեր այս մտքին (էջ 69):

Անկախ դրանից, սակայն, իրականում Գ. Արգարյանն անհարկի նեղություն է հանձն առել՝ փաստարկելու մի իրողություն (ընդօրինակություն լինելը), որը վեճի առարկա չի եղել: Այդ հանրահայտ ճշմարտությունը փաստարկելիս էլ նա չի կարողանում համոզել:

Այժմ տեսնենք, թե այդ նպատակով ինչ հարցեր է քննել Գ. Արգարյանը, խնչպե՞ս է քննել և ի՞նչ արդյունքի է հասել:

ա) Մեր տպագրած բնագրերից 1-ինում կա մի հատված, որն աղավաղված է, բայց ունի հասկանալի, ինչպես նաև շմեկնաբանվող որոշ մասեր: Գ. Աբգարյանը մեջ է բերում այդ հատվածը (էջ 72) և զբաղվում նրա քննությամբ: Ահա այդ հատվածը.

Բեր ինձու ինձու բանիր,
Շէկ մոշումէ աջըրէ դըգալ,
Բեր ի քարտոտօզիս սըմա պընակ,
Բեր ինձ քնձու խօռտօտօզիս շորափըսած:

Իր կողմից ընդգծված մասերի քննության արդյունքն այն է լինում, որ հոդվածագիրը, առանց որևէ լուրջ հիմնավորման, նախ՝ 1-ին և 3-րդ տողերից «որպես ավելորդություն» (էջ 71) դուրս է նետում ընդգծված բառերը, ապա՝ 4-րդ տողից 1-ին տող տեղափոխում մյուս ընդգծվածները և արդյունքը ներկայացնում որպես ճշգրտված բնագիր: Բայց դա այնքան անթույլատրելի է և ոչ գիտական, որ ինքը՝ Գ. Աբգարյանը, նման քայլի համար հենց նույն հոդվածում իրավացիորեն մեղադրել է Վ. Հակոբյանին (էջ 75):

Հանգամանորեն զբաղվելով այս սխալն ուղղելու գործով, մենք դիմեցինք բոլորովին այլ մեկնաբանության: Պարզվում է, որ 1, 3, 4-րդ տողերի սկզբից հանդես եկող «Բեր...» բառով սկսվող «ավելորդությունները» տողերի սկզբներից կիրառվող կրկնակներ են և պահանջում են, որ 2-րդ տողի սկզբից էլ նույն կրկնակը ենթադրվի: Բայց քանի որ դրանք սղոմով են գրի առնվել (այդ մասին որոշ նշաններ կան ձեռագրում), ուստի նման շեն միմյանց և պահանջվում է ոչ թե ազատվել դրանցից, այլ գտնել դրանց նախնական տեսքը: Մեր այս ենթադրությանն օգնում է երգի նախորդ հատվածը, որտեղ տողասկզբից երևան է գալիս «Մի գալ» կրկնակը՝ ճիշտ 4 անգամ, ինչպես քննվող հատվածում: Ուշագրավ է, որ «Մի գալ» կրկնակով սկսվող հատվածի տողերը կարճ են, և փաստորեն ունենք ոչ թե 4 տող, այլ 4 տուն: Նման տողատման է ենթարկվում նաև «Բեր...» կրկնակն ունեցող հատվածը՝ վերածվելով 4 կարճատող տան: Այն էլ ասենք, որ այդ զուգադրվող հատվածները ձևով և տաղաչափությամբ պիտի հավասարակշռեին միմյանց, որովհետև 1-ինն արտահայտում է աղչկա պահանջը՝ տղայից, իսկ 2-րդը՝ տղայի փոխադարձ պահանջը՝ աղչկանից: Այս եղանակով, ահա, վերջապես գտնվում է քննվող խճողված հատվածի հիմնական տեսքը և ենթադրական որոշ լրացումներով (ընդգծված և կարոտ հետագա ճշգրտումների) ներկայացվում է ստորև՝ աղչկա անունից ասված հատվածի հետ միասին՝ դեմ առ դեմ:

Աղջիկ

Մի գալ երկնով,
Մի գալ գետնով,
Կըտրիճ
Ու մի երկնաւորով:
Մի գալ ամպով
Մի գալ պարզով,

Տղա

Բեր ինձ ու ինձ,

.

[Աղջիկ],

Ինձու բանիր:

Բեր ինձ ու ինձ,

Շէկ մոշումէ,

Կըտրիճ	[Աղջիկ],
Ու մի բարկ արևով:	Աշըրէ դըդալ:
Մի գալ մերկիկ,	Բեր ինձ ու ինձ,
Մի գալ բորիկ,	Քարտօտօղիս,
Կըտրիճ	[Աղջիկ],
Ու մի քուռ հալաւով:	Սըմա պընակ:
Մի գալ ձիով,	Բեր ինձ ու ինձ,
Մի գալ ջորով,	Խօրտօտօղիս,
Կըտրիճ	[Աղջիկ],
Ու մի գալ հետեակ:	Շօրափըսած:

բ) Գ. Արգարյանը գիմում է նույն («Բեր ինձ ու ինձ...») հատվածի մի քանի այլ բառերի մեկնաբանությունը:

«Աշըրէ» բառի հիմքում նա տեսնում է «աճար» բառը և այն բացատրում «ող» առումով: «Աճար» բառը, սակայն, ունի այլ առումներ ևս, որոնք պահանջում են ցույց տալ, թե ինչու «ող»-ն է գերադասված: Գ. Արգարյանն այդ մասին ոչինչ չի ասում: Այս պայմաններում, եթե հիրավի «աշար» և «աճար» բառերը տվյալ բնագրում նույնիմաստ են, ապա ճիշտ կլինեի նախընտրել «առաստաղ» «ոճորք» առումը, որովհետև Խաչիկուզի շարքում «աճար» բառն այդ առումով օգտագործված է, իսկ «ող»-ը ոչ:

Ոսկորքն ալ տաճար, ա՛յ, շինենք,
Իր թեպուրն՝ այն տաճրին անաւ (էջ 132)⁴:

Երգում հետապնդված նպատակով էլ, կարծում ենք, գա առավել պատշաճ մեկնաբանություն կլինի, որովհետև պահանջված կլինի շեկ մրջյունի առաստաղի փայտերից պատրաստված դգալ, որպիսին չէր կարող ճարվել:

Առավել կարևորը, սակայն, դա չէ, այլ այն, թե նման ստուգաբանություններն ի՞նչ օգտակար գեր կարող են խաղալ Գ. Արգարյանի տեսակետը հիմնավորելու առումով: Ո՛չ մի:

գ) «Քարտօտօղ» բառը բացատրելու համար Գ. Արգարյանը դիմում է բազմաթիվ բառերի օգնությանը («Քարաթոթոշ», «Քարթաթոշ», «Քարաթոշ», «Քարթալոշ», «Քարթոշ», «Քարտօտօղ», «խխունջ», «մողես» և այլն. էջ 72): Բայց իզուր, որովհետև որոշ բառարաններում⁵ «տոտող» բառը կա և նշանակում է ամրանիստ, չըրջվող աման: Հասկանալի է, որ երգում պահանջվել է նման, բայց, քարից պատրաստած աման, որպիսին չի ճարվել և որը խիստ պատշաճ է երգի ոգուն: «Դգալի», «պընակի» կողքին «ամանի» պահանջը միանգամայն բնական է և անտարակուսելի:

⁴ Հստ այսմ սխալ է տարբերակի (էջ 131) «վաճառ»-ը (թերևս՝ «վաճար» — «վաճար»):

⁵ Լ. Աճառյան, Հայերեն գավառական բառարան (Եմինյան ազգագրական ժողովածու, հ. Թ, Քիֆլիս, 1913, էջ 1039), Ստ. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հ. Դ, Երևան, 1945, էջ 434:

դ) Հաջորդ բառը «խօռտօտօզ»-ն է: «Քարտօտօզ»-ի բացատրությունը հուշում է այստեղ էլ ամանի տեսակ հասկանալ, որովհետև երկուսի հիմքում էլ ընկած է նույն «տօտօզ»-ը: Եթե մեկի համար բնորոշ է «քար»-ը, ապա մյուսի համար՝ «խոռ»-ը: Գ. Աբդարյանը, սակայն, այստեղ դիմում է «ավելի պակաս հավանականությամբ» վերծանության, կանգ չառնելով այլևայլ ենթադրությունների և անդամ այնպիսի առաջարկությունների առաջ, ինչպիսիք են «ինչ որ կենդանու անունը», որը կարող էր լինել իրեն «անծանոթ բարբառներում», կամ մի թռչուն, որն, «ունենալով բարձր ու բարակ սրունքներ, որոնցից շերեփ պատրաստել հնարավոր չէր» (էջ 72): Հիրավի, ապարդյուն ջանքեր:

ե) Դժվար է արդարացնել առայժմ մեկնաբանության չենթարկվող «շօրափրսած» բառի վրա թափված աշխատանքը: Ըստ Գ. Աբդարյանի, իբր թե այդտեղ առկա են «շորափրս» (իմ շերեփը) և «ած» (բե՛ր) բառերը (էջ 72): Բայց գուցե և «շօրա» մասը «շորվա» ճաշի, իսկ «ափրսա»-ն «ափրսե»-ի աղավաղումն է, դուցե և փստրված կաթի շոռ է պահանջվել: Այն էլ ասենք, որ խաչգուռի շարքում «ած»-ի փոխարեն կամ «բեր» է օգտագործված (օրինակ, էջ 114, 117—118, 119, 124, 150 և այլն), կամ՝ «լից» (էջ 141), իսկ «ած»՝ բնավ:

Ենթադրենք, թե ինչ որ տեղ կարող է և արդարացվել նման մեկնաբանությունը, բայց ինչպե՞ս է Գ. Աբդարյանը այդօրինակ ենթադրությունների աջակցությամբ փորձում լուծել այնպիսի կարևոր հարց, ինչպիսին է խաչգուռի ժողովրդական երգերի գրառող լինելու կամ չլինելու հարցը:

զ) Գ. Աբդարյանը փորձում է մեկնաբանել նաև «ինձու բանիր» արտահայտությունը, բայց քանի որ այն արդեն բացատրված է մեր գրքում, ուստի նա աշխատում է «ուղղել» մեզ: Այդ նպատակով, մեր նախադասությունից դուրս է նետում համապատասխան չակերտները, ստանում սխալ և անմիջապես ուղղում այն: Տարօրինակ է, բայց փաստ է: Ահա մեր միտքը՝ նրա մեջբերմամբ. «...Տղան աղջկանից պահանջում է ինձու (պետք է լինի «ընձու» — Գ. Ա.) բանիր» (էջ 72): Ահա և մեր գրածը. «...Տղան աղջկանից պահանջում է «ինձու բանիր»... (էջ 653): Զջգրությունների ի՞նչ եղանակ է սա:

է) Գ. Աբդարյանը մեր նույն դարձվածքի օգտագործմանը զուգահեռ փորձում է ինքն էլ նույն միտքն արտահայտել, բայց, որպեսզի մեղանից տարբերվի, փոխում է այն, գրելով. «աղջիկը տղայից պահանջում է»: Եվ այսպես նա փոխում է 3 անգամ (էջ 72), չնկատելով, որ դրանով աղայի պահանջը վերագրում է աղջկան, որով երգի իմաստը այլափոխվում է:

ը) Վերջին փաստը, որ կապված է վերևում քննված ընդհանուր խնդրի հետ, վերաբերում է մեր հրատարակած 9-րդ երգի 13-րդ տողին: Ըստ Գ. Աբդարյանի, այն «հեղինակային օրինակում եղել է. «Ա՛յ, բերել, խրկագվին», իսկ № 7709 ձեռագրում դրիշը «խրկագվին»-ը չի հասկացել և դարձրել է «խրկաթ». «Ա՛յ, բերել, խրկաթին» (էջ 73): Նախ, ի՞նչ է նշանակում «հեղինակային օրինակ», չէ՞ որ գործ ունենք ժողովրդական երգի հետ: Ապա, ո՞րն է հոգվածագրի հավաստած հիմք-օրինակը, որից նա չակերտներով ընդօրինակել է. «Ա՛յ, բերել, խրկագվին» տողը: Նման փաստ գոյություն չունի. Գ. Աբդարյանը լուրջ իր ենթադրությունն է ներկայացնում՝ իրական փաստի իրավունքով: Ծիշտ չէ Գ. Աբդարյանը նաև այն դեպքում, երբ խաչգուռի

մասին գրում է, թե նա «չի հասկացել» «խրկազվին» բառը: Իսկ որտեղից գտավ ինքը՝ մեր ընդդիմախոսը՝ «խրկազվին» բառը: Չէ՞ որ մեր մատենագրության մեջ միմիայն հաջգուզն է, որ քանիցս օգտագործել է «խրկազվին» («խրկագուին») բառը (էջ 114, 126), և բոլորս էլ (այդ թվում նաև Գ. Աբղարյանը) նրանից ենք տեղեկանում դրա մասին: Հենց նրա 10-րդ երգից է, որ օգտվել է Գ. Աբղարյանը՝ «խրկազվին» ճիշտ ձևն առաջարկելիս: Հասկանալի է, որ այդ մասին պետք էր կատարել համապատասխան նշում և ոչ թե, օգտվել լռությամբ, իսկ հաջգուզին էլ համարել չհասկացող:

Քանի որ հաջգուզը քաջածանոթ էր «խրկազվին» («խրկագուին») բառաձևին, մնում է այլ կերպ բացատրել նրա ձեռագրում առկա այդ սխալը («խրկաթին»-ը): Պատճառն ինքնին հասկանալի է դառնում, երբ մենք ամբողջությամբ ենք քննում համապատասխան հատվածը.

Ա՛յ, բերել, խրկաթին...
Կաթով սընուցէր... (էջ 124)

Հիշենք նաև այդ երգի տարբերակը.

խրկազվին կաթով սընուցէր... (էջ 126)

Ինքնին նկատելի է, որ քննվող բառին հաջորդող «կաթով» բառի ազդեցությամբ է նախորդ բառի «կազվին» մասը դարձել «կաթին»:

Հաջգուզի մոտ նման վրիպումներ շատ կան: Օրինակ, «պատմեմք» բառը, սկզբի «պ» տառի ազդեցությամբ, գրվել է «պատմեմպ» ձևով (ձեռ. № 7709, թերթ 229բ): Ինքը՝ Գ. Աբղարյանը նկատել է նման մի այլ օրինակ ու բացատրել, թե հաջգուզը «213-րդ էջում «տներ» գրելու փոխարեն երկու անգամ գրել է «տներ», ազդվելով այդ բառին հաջորդող «տապալեցին» և «բլոյց» բառերի մեջ գտնվող «լ» տառից» (էջ 73): Այդպիսին է նաև «խրկաթին»-ի ծագումը:

Թ) Գ. Աբղարյանը փորձել է բացատրել նաև «խրկագու» բառը՝ գրելով. «Հավանաբար «խրկագի» (եղնիկ) բառն է, որը բաղկացած է «խրիկ» (հոիկ) և «ագի» բառերից» (էջ 73, տողատակ): Սակայն դա ճիշտ չէ, որովհետև երգի համապատասխան տան մեջ «եղնիկը» («եղն») օգտագործված է որպես ուրիշ կենդանու անուն, իսկ խրկագուն՝ ուրիշ.

Թէ զինչ եղն ի մորին,
Թէ զինչ եղն ի մորին,
Ա՛յ, բերել, խրկաթին,
Իմ պարոն Ակնարիկոս,
Կաթով սընուցեր: (էջ 124)

Կարելի էր աշխարհի բոլոր կենդանիների անունները թվարկել, բացի եղնիկից: Չսխալվելու համար պետք էր ծանոթանալ գեթ տվյալ տողի նախորդ տողերին:

Մենք մեկ առ մեկ քննեցինք այն բոլոր փաստերն ու փաստարկումները, որոնց դիմել է Գ. Աբղարյանը, որպեսզի համոզի, թե № 7709 ձեռագրում

գտնվող երգերի առաջին գրառողը հաշգոռուզը չէ: Բայց մեր համոզմամբ Գ. Աբգարյանի փաստարկումներից և ոչ մեկը չի արդարացնում իրեն: Դրանք իարսխված են կամ թյուրիմացության կամ էլ բոլորովին անընդունելի ենթադրության վրա: Այս բոլորից հետո առնվազն զարմանալի է Գ. Աբգարյանի այն ընդհանուր եզրակացությունը, թե «Բերված և չբերված մի շարք այլ օրինակներ կասկած չեն թողնում (ընդգծումը մերն է—Ա. Մ.) այն մասին, որ հաշգոռուզը ժողովրդական երգերն ընդօրինակել է գրավոր աղբյուրից, ուստի այդ երգերը առաջին անգամ գրի առնելու ժամանակը պետք է համարել ոչ թե XVII դ. (1608 թ.), այլ ավելի վաղ ժամանակներ» (էջ 73): Բերված օրինակների ուժն ու արժեքը տեսանք վերևում, չբերվածների մասին կարող ենք դատել առավել զրանց օրինակով: հաշգոռուզի՝ որպես ժողովրդական երգերի գրառողի մասին, սակայն, կարևորը դրանք չեն, այլ այն, ինչ շրջանցել է Գ. Աբգարյանը: Խոսքը՝ հաշգոռուզի այն տողերին է վերաբերում, որոնցով նա վկայում է, թե № 7709 ձեռագրի ժողովրդական երգերը գրի է առել ինքը: Դրանք հիշատակարանանման երկու տներ են, որոնք հաշգոռուզը կցել է ժողովրդական երգերի շարքի վերջին միավորին: Ուշագրավ է, որ դրանք դրված են իրենց նախորդող երգի տաղաչափությամբ, կրկնակներով, բովանդակությամբ և այն տպավորությունն են թողնում, թե հանդիսանում են երգի ու շարքի օրգանական մասը: Հենց այդ պատճառով էլ մենք ժամանակին դժվարացել ենք նրանց սահմանազատման հարցում և առաջարկել 2 տարբերակ (էջ 151, 481—482): Ահա այդ տները.

ՅԱստուծոյ կամօքն,
Իմ գոռուզ երես, ա՛յ,
Առնուն մէկ ըզմէկ, ա՛յ.
Օ՛խ, իմ պարոն, էյնէկ,
Ու տառաւն ամենոյն, ա՛յ:

Ես եմ հաշերես,
Աղվար երես, ա՛յ,
Պարըս գրեցի,
Ա՛ղ, իմ պարոն, էյնէկ,
Ու տառաւն ամենոյն, ա՛յ:

Այստեղ պարզ ասված է, թե հենց ինքն է «գրել» (իմա՝ գրի առել) նշված պարը:

Հետագայում Վենետիկի № 1330, ինչպես նաև Մաշտոցի անվան Մատենադարանի նոր ձեռք բերած № 10208 ձեռագրերում երևան եկան հաշգոռուզի շարքի մի քանի նմուշների այլ տարբերակներ (առայժմ անտիպ), որոնք առավել անառարկելի են դարձնում վերոհիշյալ հիշատակարանային տողերի մասին մեր հայտնած կարծիքը:

Հարցի նոր ու հանգամանալից քննությունը երևան է հանում մի այլ նույնքան պերճախոս իրողություն: Խոսքը՝ «հաշգոռուզ» մականվան մեկնաբանության մասին է: Հ. Աճառյանը, անդրադառնալով մեր հեղինակին, գրում է. «հաշգոռուզ անունը ծագում է բնականաբար հյ. խաչ+գոռուզ գան-

դուր» բառերից, բայց անհասկանալի է, թե ինչ կապ ունի գոուզը խաշի հետ»⁶։ Այս հարցի չգտնված պատասխանը տալիս է հաշգոուզի կնունքի «հաշերես» անվան և նրա գրի առած երգերի ուսումնասիրությունը։ Պարզվում է, որ նրանց մեջ հանդիպող առանձին բառերից ու մասնիկներից է, որ հաշերեսը պատանեկության տարիներին ստեղծել է իր «հաշգոուզ» մականունը։ Այսպես, Հ. Աճառյանի նշած խաշ և գոուզ բառերի միասնությանը հանգիպում ենք հաշգոուզի շարքի 18-րդ երգում, ուր ասված է, թե վանքի գմբեթի վրա գտնվող խնձորին՝

Գոուզ խաշ մ'ալ կայ,

Գոուզ խաշ մ'ալ կայ։ (էջ 137)

Քիչ հետո այս «գոուզ խաշ»-ի և իր հաշերես (խաշ+երես) անվան մեջ տեսնելով ընդհանուր խաշ արմատը, գրիչը դիմել է այսպիսի բառախաղի.

ՅԱնտուծոյ կամօքն,

Իմ գոուզ երես...

Ի վերջո, նա այգտեղ առկա խաշ+գոուզ, խաշ+երես, գոուզ+երես և հաշերես նախադրյալներից էլ ստեղծել է իր հաշգոուզ մականունը։

Ահա թե որքան անքակտելիորեն են միմյանց հետ կապված «հաշգոուզ» գրիչն ու «հաշգոուզի շարքը»։

Մենք կարող ենք մեր կարծիքը հիմնավորելու նպատակով վկայակոչել նաև օժանդակ փաստեր։ Դրանցից մեկն է հաշգոուզի շարքի միավորների առանձին խմբով գրի առնված լինելը, դրանց ներքին խմբաբաժանվածությունը, լեզվա-ոճական, տաղաչափական ընդհանրությունները և այլ պարագաներ, որոնք ցույց են տալիս, թե դրանք գրի են առնված ազգագրական-աշխարհագրական նույն միջավայրում և նույն ժամանակներում⁷։ Իսկ որ հաշգոուզի մանկության օրերին այգ երգերը տարածված էին Ղրիմում, այգ մասին էլ ունենք բավարար փաստեր։

Այս բոլորը նորից են համոզում, որ, իրո՞ք, հաշգոուզն է գրի առել քննվող շարքը և վերջում այգ մասին հիշեցրել.

Ես եմ հաշերես...

Պարս գրեցի...

Գ. N 7709 ձեռագրի ընդօրինակման և նրա բովանդակած «հաշգոուզի շարքի» գրառման ժամանակների հարցերը

N 7709 ձեռագրի ընդօրինակման ժամանակի մասին 1930—1970 թթ. ընթացքում հայտնվել են մի շարք միմյանցից տարբերվող կարծիքներ։ Դրանքից ամենաստույգը 1970 թ. կատարված վերջին ճշգրտումն է, որի համա-

⁶ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Հ. Բ, Երևան, 1944, էջ 500։

⁷ Դա չի նշանակում, թե այգ շարքի առանձին միավորներ չէին կարող դրանից առաջ գրի առնված լինել։ Մեր գրքում կա մի տարբերակ, որն իրոք այդպիսին է (էջ 132—133)։ Այժմ ունենք նաև ուրիշ օրինակներ։ Դրանք, ընդհանրապես, ավելի են համոզում «հաշգոուզի շարքի» ամբողջությունը և միևնույն ժամանակին, միջավայրին ու գրառողին պատկանելը։

ձայն, № 7709 ձեռագիրը գրվել է 1608—1658 թթ.⁸։ Հակառակ այս իրողությանը, Գ. Արզարյանն իր հոգվածում գրում է. «№ 7709 ձեռագրի ընդօրինակման իրական թվականները քաջ հայտնի են եղել մասնագետներին։ Դեռևս 1951 թ. Վ. Հակոբյանը... ժամանակ է նշել 1620—1658 թթ.» (էջ 69)։ Իրերի այս գրութայն մեջ Գ. Արզարյանը պարտավոր էր առնվազն հերքել 1970 թվականի ճշգրտումը և ապա միայն իր գրույթների հաստատման համար դիմել արդեն վերանայված «1620—1658» տվյալին։ Մեր անձնական ստուգումները՝ կատարված վերջերս, նորից են համոզում, որ ճիշտ է վերջին ստուգման արդյունքը, ուստի և այսօր նախորդ տվյալի⁹ մասին խոսելն ու մանավանդ նրա վրա հիմնվելը՝ անհարկի աշխատանք կլիներ։

№ 7709 ձեռագրի ընդօրինակման ստուգված տվյալի (1608—1658 թթ.)¹⁰ շնորհիվ, փաստորեն պիտի լուծված համարել նաև այն չբացահայտված (լուռ մնացած) բանավեճը, որ կար Վ. Հակոբյանի և մեր միջև։ Հետևապես Գ. Արզարյանը հիմք չունի այսօր, առանց «Ձեռագրացուցակի» վերոհիշյալ ստուգումը հերքելու, վերստին հենվել Վ. Հակոբյանի առաջարկած, բայց արդեն վերանայված տվյալի ու փաստարկումների վրա (էջ 67—70)¹¹։

Մեր վերջին ստուգումներից պարզվում է նաև, որ հաշգոտվել 1608 թ. ժողովրդական երգերը գրի է առել ոչ թե մի այլ ձեռագրում և 1620—1658 թթ. ընդօրինակել № 7709 ձեռագրում, ինչպես կարծել ենք մենք (էջ 463), այլ հենց սկզբից նա դրանք զետեղել է նույն № 7709 ժողովածուի մեջ։ 1656 թ., երբ մաշվածութայն պատճառով, նա արտագրել է այդ ձեռագրի բազմաթիվ թերթերը, արտագրել է նաև ժողովրդական երգերը։ Ուստի դրանք այսօր մեզ են հասել 1656 թ. արտագրությամբ և ոչ թե 1620, ինչպես պնդում է Գ. Արզարյանը (էջ 69)։

Որ հաշգոտվի շարքը № 7709 ձեռագրում գրի է առնվել 1608 թ., դա երևում է նաև հետևյալ փաստից։ Երկար ժամանակ ուժի մեջ էր ձեռագրի 66բ թերթի վրա գտնվող 1620 թ. հիշատակարանը՝ որպես ձեռագրի սկսման տարվա հիշատակարան։ Այժմ մեր ստուգումից պարզվում է, որ այդ հիշատակարանը գրված է դրանից ավելի առաջ ընդօրինակված թերթերից մեկի ազատ մնացած տեղում։ Թե ե՞րբ է գրված այդ հին մասը, նշում չկա։ Բայց

⁸ «Ճուշտակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. 2, Երևան, 1970, էջ 592։ Տվյալ ձեռագրի նկարագրությունը կատարել է Ա. Զեյթունյանը։

⁹ Զարմանալի է, որ Գ. Արզարյանն այդ հնացած տվյալը կապում է Վ. Հակոբյանի անվան և 1951 թ. հետ, երբ իրականում այն առաջարկվել է Ա. Արբախյանի կողմից, այն էլ 1944 թ.։ Զարմանալի է նաև այն, որ այդ կապակցությամբ աղբյուրները նշելիս, Գ. Արզարյանը Վ. Հակոբյանի անվան տակ է զետեղել նաև Ա. Արբախյանի հոգվածը՝ առանց նրա անվան նշումի (էջ 69, ծանոթ. 20)։

¹⁰ Մեր վերջին ստուգումները ցույց տվին, որ № 7709 ձեռագիրն ընդօրինակվել է 3 ժամանակահատվածում. ա) 1608—1624, բ) 1630—ական, գ) 1656—1658 թթ.։

¹¹ Գ. Արզարյանը փորձում է գրի 1656 թ. հիշատակարանում եղած 1608 թ. կապել ժամանակագրության հետ։ Զուգահեռելով ձեռագրի բովանդակությունն ըստ նյութերի առկայության և հիշատակարանում եղած նրանց թվարկման, թե՛ մեկում, և թե՛ մյուսում նա տեսնում է նյութերի 2 բաժին՝ Տաղեր և հայրեններ, ապա ժամանակագրություն (էջ 68)։ Ինչպես երևում է, նա այստեղ էլ թերացել է լրիվ ծանոթանալ ձեռագրին և նրա հիշատակարանին։ Նրա ուշադրությունից վրիպել է մի ամբողջ բաժին՝ Գեղաբնակավայրի բաժինը, որը գրավում է ձեռագրի նյութերի միջին տեղը և որի մասին հիշատակարանում ասված է. «Գրեր ես՝ Պրզընձէ քաղաքն... Վաճառականն...» և այլն։ Այս պարագան խանգարում է դիմել այն հաշվումների օգնությամբ, որոնց վրա հենվել է Գ. Արզարյանը։

այն շատ հին էլ չի կարող լինել, որովհետև գրիչը ծնվել է 1592 թ.։ Ահա այստեղ է, որ օգնության է հասնում վերոհիշյալ 1608 թ. նշումը և լուծում հարցը։ Երկու ասարերի փաստերի այսպիսի համընկնումը կասկած չի թողնում ձեռագրի սկսման և նրա մօջ գտնվող ժողովրդական երգերի գրաման ժամանակը համարել 1608 թ.։ Դրանց միանդամային ներդաշն է նաև գրչի 1656 թ. այն հազվագյուտ անդեկոթյունը, թե՛

Այս տաղեր տղակուտ ի վեր գրեցի...

Այսինքն՝ տղայական տարիներից, երբ ինքն արգեն, ըստ վերոհիշյալ փաստերի, 16 ասարեկան էր։

Ձեռագրում և այլ սղրյուրներում, ինչպես նաև Գ. Արգարյանի դիտողություններում, չկա ոչ մի փաստ, որը թույլ շտար հավատալ գրչի այս անաղարտ վկայություններին*։

Ամփոփելով վերևում շարադրվածը, կարող ենք ասել, որ Գ. Արգարյանի դիտողություններն անընդունելի են, որովհետև չեն համապատասխանում փաստերին։

ЕЩЕ РАЗ О РУКОПИСИ № 7709 МАТЕНАДАРАНА

АСАТУР МНАЦАКАНЯН

Резюме

В «Вестнике общественных наук» АН Арм.ССР (№ 6, 1977 г.) была опубликована статья Г. Абгаряна «Немецкий перевод «Хроники» Хачатуря Кафаеци и песенник № 7709 Матенадарана», где имеется ряд замечаний также относительно изданных нами в 1956 г. народных песен, содержащихся в этой рукописи. Автор статьи делает попытку пересмотреть период записи этих песен, считает, что впервые эти песни записал не Хачатур (Хачатур Кафаеци), приписывает нам мысль о том, что мы, якобы, первые записи армянских народных песен относим к началу XVII в. Абгарян пытается также объяснить некоторые неясные слова текстов этих песен.

Обстоятельный разбор данных рукописи, касающихся этих вопросов, наглядно показывает, что замечания Абгаряна неприемлемы, ибо они не соответствуют фактам.

* Մշակույթի անվան Մասենադարանի № 7709 ձեռագրի տվյալները հնարավորություն չեն ընձեռում վերջական խոսք ասելու, թե ե՞րբ է ընդօրինակվել այս ձեռագիրը՝ 1608 թ. թե՛ 1620 թ. (Մանթ. խմբ.)։